ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 22.04.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2022/40

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ «Առաքելություն Հայաստան» բարեգործական ՀԿ
Բողոք բերող՝ «Սևանի հացի գործարան» ՓԲԸ

Մասնակցությամբ՝
«Առաքելություն Հայաստան» բարեգործական ՀԿ-ի ներկայացուցիչներ՝ Ա. Թունանյանի, Ա. Խաչատրյանի,
«Սևանի հացի գործարան» ՓԲԸ-ի ներկայացուցիչ՝ Ս. Գրիգորյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԱՀԲՀԿ-ԳՀԱՊՁԲ-22/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, հացի ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), քննության առնելով «Սևանի հացի գործարան» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից 04.04.2022թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ Բողոք) և կից փաստաթղթերը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի նախապատմությունը.

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է՝

1. դադարեցնել «Առաքելություն Հայաստան» բարեգործական ՀԿ-ի կողմից հացի ձեռքբերման նպատակով հայտարարված «ԱՀԲՀԿ-ԳՀԱՊՁԲ-22/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով մրցույթի գնահատող հանձնաժողովի 28.03.2022թ.-ի ժամը 12:00-ի թիվ 4 արձանագրության (որոշման) «գնահատող հանձնաժողովը որոշեց» մասի 1-ին կետով կայացված «Սուսաննա Խաչատրյան» Ա/Ձ-ին 1-ից 6-րդ չափաբաժիններով ընտրված մասնակից ճանաչելու և նույն մասի 3-րդ կետով անգործության ժամկետից հետո «Սուսաննա Խաչատրյան» Ա/Ձ-ին պայմանագրի նախագիծ ուղարկելու ու պայմանագիր կնքելու որոշումը,
2. պարտավորեցնել պատվիրատուի գնահատող հանձնաժողովին վերանայել իր դիրքորոշումը և 1-ից 6-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչել հրավերի պահանջներին համապատասխան գնային առաջարկ ներկայացրած և ցածր գին առաջարկած «Սևանի հացի գործարան» ՓԲԸ-ին:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 04.04.2022թ.-ին:

04.04.2022թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ բողոքը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2022/40 համարի ծածկագիրը:

13.04.2022թ.-ին և 22.04.2022թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 13.04.2022թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 22.04.2022թ.-ին:

2. «Սևանի հացի գործարան» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Սևանի հացի գործարան» ՓԲԸ-ն 04.04.2022թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«ՍԵՎԱՆԻ ՀԱՅԻ ԳՈՐԾԱՐԱՆ ՓԲԸ-ն մասնակցել է ս/թ մարտի 21-ին «Առաքելություն Հայաստան» բարեգործական ՀԿ-ի կողմից հացի ձեռքբերման նպատակով

հայտարարված ԱՀԲՀԿ-ԳՀԱՊՁԲ-22/3 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով մրցույթին: Ըստ հրավերի՝ գնառաջարկով պահնջվում էր ներկայացնել մեկ կգ հացի համար առաջարկվող գինը: ՍԵՎԱՆԻ ՀԱՅԻ ԳՈԲԾԱԲԱՆ ՓԲԸ-ն պահպանելով հրավերի պահանջը սահմանված կարգով իր հայտով ներկայացրել է գնառաջարկը՝ մեկ կգ հացի համար առաջարկելով 368 ՀՀ դրամ: Մյուս մասնակիցները 1-ից 6-րդ չափաբաժինների համար՝ 1 կգ հացի գինը առաջարկել են՝ շատ բարձր: Պատվիրատուն 28.03.2022 թվականի թիվ 4 արձանագրությամբ, որը տեղեկագրում հրապարակվել է 30.03.2022թ-ին, օրենսդրության համաձայն արձանագրել է նաև բոլոր մասնակիցների առաջարկած գները: 1-ից 6-րդ չափաբաժինների համար արհեստականորեն մյուսների գները նվազեցված են: Միաժամանակ վերը նշված արձանագրությամբ ներկայացվել է նաև գնահատող հանձնաժողովի գնահատման արդյունքները, որտեղ 1-ից 6-րդ չափաբաժիններով ընտրված մասնակից է ճանաչվել Սուսաննա Խաչատրյան Ա/Ձ-ն: Նշենք, որ Սուսաննա Խաչատրյան Ա/Ձ-ն 1-6-րդ չափաբաժինների համար ներկայացրել է 238837 ՀՀ դրամից մինչև 1013250 ՀՀ դրամ մեկ կիլոգրամ հացի համար, իսկ ՍԵՎԱՆԻ ՀԱՅԻ ԳՈԲԾԱԲԱՆ ՓԲԸ-ն 368 ՀՀ դրամ:

ՀՀ «Գնումների մասին» օրենքի 2-րդ հոդվածի 8-րդ կետ.

8) հայտ՝ հրավերի հիման վրա մասնակցի կողմից ներկայացվող առաջարկ.

Համաձայն ՀՀ «Գնումների մասին» օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին ենթակետի, այն է՝

2. Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է՝

1) բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:»:

Ելնելով վերոգրյալից, «Սևանի հացի գործարան» ՓԲԸ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է

1. դադարեցնել «Առաքելություն Հայաստան» բարեգործական ՀԿ-ի կողմից հացի ձեռքբերման նպատակով հայտարարված «ԱՀԲՀԿ-ԳՀԱՊՁԲ-22/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով մրցույթի գնահատող հանձնաժողովի 28.03.2022թ.-ի ժամը 12:00-ի թիվ 4 արձանագրության (որոշման) «գնահատող հանձնաժողովը որոշեց» մասի 1-ին կետով կայացված «Սուսաննա Խաչատրյան» Ա/Ձ-ին 1-ից 6-րդ չափաբաժիններով ընտրված մասնակից ճանաչելու և նույն մասի 3-րդ կետով անգործության ժամկետից հետո «Սուսաննա Խաչատրյան» Ա/Ձ-ին պայմանագրի նախագիծ ուղարկելու ու պայմանագիր կնքելու որոշումը,

2. պարտավորեցնել պատվիրատուի գնահատող հանձնաժողովին վերանայել իր դիրքորոշումը և 1-ից 6-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչել հրավերի պահանջներին համապատասխան գնային առաջարկ ներկայացրած և ցածր գին առաջարկած «Սևանի հացի գործարան» ՓԲԸ-ին:

«Սևանի հացի գործարան» ՓԲԸ-ն 21.04.2022թ.-ին ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է նաև հետևյալը.

«Ծանոթանալով «Առաքելություն Հայաստան» բարեգործական ՀԿ-ի դիրքորոշմանը հայտնում եմ, որ համաձայն չեմ պատվիրատուի կողմից բերված հիմնավորումների հետ: Ի պատասխան Պատվիրատուի դիրքորոշմանը հայտնում եմ, որ այն ընդունելի և համոզիչ չէ ՍԵՎԱՆԻ ՀԱՅԻ ԳՈՐԾԱՐԱՆ ՓԲԸ-ի համար: Ավելին առկա են նաև հակասություններ իրենց դիրքորոշման և կատարված գործողությունների միջև: Պատվիրատուն նախորդ նիստի ժամանակ պնդում էր, որ 330 ՀՀ դրամից ավել պայմանագիր չի կարող կնքվել, քանի որ ավել գումար նախատեսված չէ: Պնդումը ստացվում է սին է: Մասնավորապես՝ չաափաբաժիներ 2-ի (Աջափնյակի շրջան), 3-ի (Շենգավիթի շրջան) և 5-ի (Նոր-Նորք շրջան) համար պլանով նախահաշվային գինը սահմանված է 330 ՀՀ դրամ 1 կգ հացի համար, իսկ թիվ 28.03.2022թ թիվ 4 արձանագրությանը կից հավելված 1-ում նշված են ընտրված մասնակից՝ Սուսաննա Խաչատրյան Ա/Ձ-ի ներկայացրած գինը վերը նշված չաափաբաժինների համար 350 ՀՀ դրամ: Համաձայն 28.03.2022թ թիվ 4 արձանագրության Ա/Ձ Սուսաննա Խաչատրյանը ընտրված մասնակից է ճանաչվել հանձնաժողովի կողմից: Պատվիրատուն անկեղծորեն իր դիրքորոշման մեջ նշել է, որ իրենց կողմից նախընտրելի գինը (նման հասկացողություն առկա չէ գնումների օրենսդրության մեջ) 330 ՀՀ դրամն է: Ելնելով Պատվիրատուի գործողությունների տրամաբանությունից, 1-6-րդ չաափաբաժինների համար պետք է պայմանագիր կնքվի ՍԵՎԱՆԻ ՀԱՅԻ ԳՈՐԾԱՐԱՆ ՓԲԸ-ի հետ: Բացատրությունը հետևյալն է՝ ունենալով 330 ՀՀ դրամ նախընտրելի գին Պատվիրատուն պատրաստ է պայմանագիր կնքել 350 ՀՀ դրամ՝ այսինք իր կողմից ձևակերպված նախընտրելի գնի գերազանցմամբ առաջարկվող գնով, ուրեմն նույն տրամաբանությամբ կարող է պայմանագիր կնքվել 368 ՀՀ դրամով, քանի որ 350 ՀՀ դրամ գնային առաջարկ առկա չէ փաստաթղթերում, այն արհեստականորեն տրոհված ձևով ներկայացված է արձանագրության մեջ: Ստացվում է արձանագրությամբ ներկայացված են թվեր, որոնք չեն համապատասխանում իրական գնային առաջարկներով առաջարկված թվերին:»:

3. <u>«Առաքելություն Հայաստան» բարեգործական ՀԿ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 04.04.2022թ.-ին թիվ Ն/ԲՔԱ-ԼՕ/2/5743-2022 գրությամբ դիմել է «Առաքելություն Հայաստան» բարեգործական ՀԿ-ին (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Սևանի հացի գործարան» ՓԲԸ-ի կողմից 04.04.2022թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն 06.04.2022թ.-ին ներկայացնելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 4-րդ մասով պահանջված «ԱՀԲՀԿ-ԳՀԱՊՁԲ-22/3» ծածկագրով գնման ընթացակարգի համապատասխան փաստաթղթերի պատճենները, ներկայացրել է նաև գրավոր դիրքորոշում՝ հայտնելով հետևյալը.

«Ի պատասխան ԱՀԲՀԿ-ԳՀԱՊՁԲ-22/3 ծածկագրով գնման ընթացակարգի «ՍԵՎԱՆԻ ՀԱՑ ԳՈՐԾԱՐԱՆ» ՓԲԸ-ի կողմից բողոքարկման վերաբերյալ Ձեր գրության տեղեկացնում ենք, որ.

«Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից gnumner.am կայքում, «Գնումների պլան» ենթամենյուի ներքո 2022 թվականի փետրվարի 11-ին նախապես հրապարակվել էր 2022 թվականի գնումների պլանը, որում հացամթերք անվանման ներքո հացի գնման համար Երևան քաղաքում որպես նախընտրելի գին սահմանվել է 330/երեք հարյուր երեսուն/ ՀՀ դրամ:

2022 թվականի մարտի 21-ին «Առաքելություն Հայաստան» բարեգործական ՀԿ-ի կողմից ԱՀԲՀԿ-ԳՀԱՊՁԲ-22/3 ծածկագրով հայտարարվել էր հացի ձեռքբերման մրցույթ և գնանշման հարցման ընթացակարգի հրապարակված հրավերի պահանջների Հավելված 1-ով հրապարակված գնային առաջարկի պայմանների մեջ 1-6 չափաբաժինների համար որպես ներկայացման ենթակա տվյալներ էր նախատեսվել 1 կգ հացի գինը, իսկ Հավելված 2-ով 9 ամսվա կտրվածքով ընդհանուր քանակի համար նախատեսված գինը:

Կերը նշված 1-6 չափաբաժիններին մասնակցել են «Վան-Բուլանժե» ՍՊԸ-ն, Սուսաննա Խաչատրյան ԱՁ-ն և «Սևանի հացի գործարան» ՓԲԸ-ն:

Հայտերի բացումից հետո պարզվել է, որ ամենացածր գինը առաջարկել է Սուսաննա Խաչատրյան ԱՁ-ն և հետևաբար զբաղեցրել առաջին տեղը, երկրորդ տեղը զբաղեցրել է «Սևանի հացի գործարան» ՓԲԸ-ն, իսկ երրորդ տեղը «Վաե-Բուլաեժե» ՍՊԸ-ն /հիմք 28/03/2022թ.-ի թիվ 4 արձանագրություն և կից թիվ 1 հավելված/:

Ուստի, ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի, 2-րդ մասի 1-ին կետի և 6-րդ մասի պահանջներով գնահատող հանձնաժողովը ուսումնասիրել և բավարար է գնահատել դիմող Սուսաննա Խաչատրյան ԱՁ-ի ներկայացրած փվայլները նվազագույն գնային առաջարկ ներկայացնելու հիմքով:»:

4. <u>ԳԲՔԱ-LO-2022/40 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Առաքելություն Հայաստան» բարեգործական ՀԿ-ի կողմից հացի ձեռքբերման նպատակով 21.03.2022թ.-ին հայտարարվել է «ԱՀԲՀԿ-ԳՀԱՊՁԲ-22/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգի հրավերի 2-րդ մասի, հայտը պատրաստելու մասին հրահանգի 2-րդ կետի 2.6-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված գնային առաջարկ՝ համաձայն Հավելված թիվ 2-ի:

iii. Հավելված 2-ով սահմանվել է, որ մասնակիցները գնային առարակները պետք է ներկայացնեն հացի 1 կգ.-ի համար նախատեսված գումարով:

iv. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել նաև «Սևանի հացի գործարան» ՓԲԸ-ն և «Սուսաննա Խաչատրյան» Ա/Ձ-ն:

v. «Սուսաննա Խաչատրյան» Ա/Ձ-ն 1-ից 6-րդ չափաբաժինների համար ներկայացրած Հավելված 2-ով՝ ներկայացրել է համապատասխանաբար 955 350 ՀՀ դրամի, 1 013 250 ՀՀ դրամի, 1 013 250 ՀՀ դրամի, 955 350 ՀՀ դրամի, 238 837 ՀՀ դրամի և 1 013 250 ՀՀ դրամի գնային առաջարկ:

vi. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 28.03.2022թ.-ի նիստի թիվ 4 արձանագրության 5-րդ կետի համաձայն՝ բոլոր մասնակիցների հայտով ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

vii. Նույն արձանագրության 6-րդ համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է 1-ից 6-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչել «Սուսաննա Խաչատրյան» Ա/Ձ-ին:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ «Սևանի հացի գործարան» ՓԲԸ-ի կողմից ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախոսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան հացի, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը չի կարող նույն Ընթացակարգին ներկայացնել մեկից ավելի հայտ: Մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման: Ընդ որում, մասնակցի հայտը ենթակա չէ մերժման, եթե՝

ա. գնային առաջարկի արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակները լրացված են միայն թվերով, իսկ ընդհանուր գնի սյունակը՝ և՛ տառերով, և՛ թվերով կամ միայն տառերով,

բ. գնային առաջարկի արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների միջև առկա է անհամապատասխանություն, սակայն տառերով կամ թվերով նշված գումարներից որևէ մեկի հանրագումարը համապատասխանում է ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարին,

գ. գնային առաջարկում չափաբաժնի համարը սխալ է նշված, սակայն գնման առարկայի անվանումը ճիշտ է լրացված,

դ. գնային առաջարկի արժեք, ավելացված արժեքի հարկ և ընդհանուր գումար սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների լումաները կլորացված են մինչև հինգ տասնորդականը՝ դեպի ներքև ամբողջ թիվը, իսկ հինգ տասնորդական և դրանից ավելին՝ դեպի վերև ամբողջ թիվը,

ե. գնային առաջարկի արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակներում գումարները լրացված են ինչպես թվերով, այնպես էլ տառերով, և դրանք համապատասխանում են միմյանց, իսկ ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարի մեջ լրացված են ավելորդ բառեր, որի արդյունքում ստացվում է գոյություն չունեցող թիվ: Ընդ որում, սույն պարբերության մեջ նշված դեպքում գնահատող հանձնաժողովը հայտը գնահատելիս հիմք է ընդունում արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով լրացված գումարների հանրագումարը,

զ. գնային առաջարկի սյունակներում տառերով լրացված գումարների մեջ լումաները նշված են թվերով:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե

անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

«Առաքելություն Հայաստան» բարեգործական ՀԿ-ի կողմից հացի ձեռքբերման նպատակով 21.03.2022թ.-ին հայտարարված «ԱՀԲՀԿ-ԳՀԱՊՁԲ-22/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 5.1-րդ կետի համաձայն՝ առաջարկվող գինը ծառայության արժեքից բացի ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից: Առաջարկվող գնի հաշվարկը պետք է ներկայացվի հայտով համակարգի միջոցով:

Հրավրի 5.2-րդ կետի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա ներկայացվող գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Ընդ որում, Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, ներառյալ եթե մասնակիցը մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի երբ բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ընդ որում՝ որոշ բացառություններով, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Առաքելություն Հայաստան» բարեգործական ՀԿ-ի կողմից հացի ձեռքբերման նպատակով 21.03.2022թ.-ին հայտարարված «ԱՀԲՀԿ-ԳՀԱՊՁԲ-22/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ հրավերի 2-րդ մասի, հայտը պատրաստելու մասին հրահանգի 2-րդ կետի 2.6-րդ ենթակետով սահմանվել է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված գնային առաջարկ՝ համաձայն Հավելված թիվ 2-ի, որի համաձայն՝ մասնակիցները գնային առարակները պետք է ներկայացնեն հացի 1 կգ.-ի համար նախատեսված գումարով: Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Սուսաննա Խաչատրյան» Ա/Ձ-ն 1-ից 6-րդ չափաբաժինների համար ներկայացրած Հավելված 2-ով՝ ներկայացրել է համապատասխանաբար 955 350 ՀՀ դրամի, 1 013 250 ՀՀ դրամի, 1 013 250 ՀՀ դրամի, 955 350 ՀՀ դրամի, 238 837 ՀՀ դրամի և 1 013 250 ՀՀ դրամի գնային առաջարկ, ինչով պայմանավորված Հանձնաժողովի 28.03.2022թ.-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ որոշում է կայացվել 1-ից 6-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչվել «Սուսաննա Խաչատրյան» Ա/Ձ-ին:

Ամբողջացնելով գործում առկա փաստերը՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ գնահատող հանձնաժողովն, օգտվելով մասնակիցների ներկայացրած հայտերի՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատումն իրականացնելու իր իրավունքից, բաժանման միջոցով «Սուսաննա Խաչատրյան» Ա/Ձ-ի կողմից ըստ

համապատասխան չափաբաժինների համար ներկայացված ընդհանուր գնից ստացել է 1 կգ.-ի համար նախատեսված համեմատելի գին, և համեմատելով այն «Սևանի հացի գործարան» ՓԲԸ-ի 1 կգ.-ի համար առաջարկված գնի հետ, որոշում է կայացրել 1-ից 6-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչել «Սուսաննա Խաչատրյան» Ա/Ձ-ին, քանի որ վերջինիս գնային առաջարկը, 1 կգ.-ի կտրվածքով, ավելի ցածր է, քան մյուս մասնակցի գնային առաջարկը:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Հանձնաժողովը կայացնելով «Սուսաննա Խաչատրյան» Ա/Ձ-ի հայտը բավարար գնահատելու և 1-ից 6-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչել մասին որոշում, գործել է իրավաչափ՝ ապահովելով Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի դրույթներով սահմանված սկզբունքների կիրառումը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

«Սևանի հացի գործարան» ՓԲԸ-ի կողմից 04.04.2022թ.-ին թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2022/40 ծածկագրով ներկայացրած բողոքը մերժել ամբողջությամբ՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**